Արձանագրություն 2

ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով ԳՀ ընթացակարգով

գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 25.03.2019թ.
ժ.17:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Սարգիս Ստեփանյան

անդամներ՝ Աշոտ Քթոյան, Էրիկ Համբարձումյան,

քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ս. Ստեփանյան)

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Գնանշման հարցում ընթացակարգով գնման ընթացակարգը armeps.am համակարգով լուծարելու և վերահայտարարելու մասին.
3. Գնանշման հարցում ընթացակարգով գնման գործընթացի հանձնաժողովի հաջորդ նիստի ժամանակացույցը հաստատելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնման ընթացակարգը armeps.am համակարգով լուծարելու մասին

Պատասղանատու ստորաբաժանումը, 25.03.2019թ.-ին ներկայացնելով ճշգրտված գնման հայտ, տեղեկացրել է ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին այն մասին, որ հրավերում անհրաժեշտ է կատարել փոփոխություն՝ մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների մասով: Մասնավորապես, նոր գնման հայտով հանվել է հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիայի առկայությունը, քանի որ ՀՀ կառավարության 18.03.2011թ. թիվ 271-Ն որոշմամբ ուժը կորցված է ճանաչվել ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի «Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրության գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 574-Ն որոշումը: Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց armeps.am համակարգով լուծարել ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգը, հաստատել հրավերի խմբագրված տեքստը և այն վերահայտարարել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնանշման հարցում ընթացակարգով գնման գործընթացի հանձնաժողովի հաջորդ նիստի ժամանակացույցը հաստատելու մասին

(Ս. Ստեփանյան)

Հաստատել **ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-19/3** ծածկագրով Գնանշման հարցում ընթացակարգով գնման գործընթացի հանձնաժողովի հաջորդ նիստի հետևյալ ժամանակացույցը՝ հայտերի բացման գործընթացը կազմակերպել **01.04.2019թ.**-ին, ժամը **10:30**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Ս. Ստեփանյան /նախագահ/

Ա.Քթոյան

Է. Համբարձումյան

Ս. Պետրոսյան /քարտուղար/